ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 4.

ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի բնական գիտությունների ֆակուլտետի գիտխորհրդի նիստի
25 դեկտեմբերի 2016թ.

Նախագահ՝ Մ. Ա. Զաքարյան

Քարտուղար՝ Կ .Հ. Հովսեփյան

Նիստին մասնակցում էին խորհրդի 10 անդամներ:

ՕՐԱԿԱՐԳ

1. *2016-17թթ. ուս. տարվա I կիսամյակի քննաշրջանի գրաֆիկի հաստատում:*
/ զեկ. Մ. Ա. Զաքարյան /
2. *2016-17թթ. ուս. տարվա I կիսամյակի II ընթացիկ ստուգումների և ընթացիկ քննությունների արդյունքների ամփոփում:*
/զեկ. Մ. Ա. Զաքարյան /
3. *Մասնագիտական կրթական ծրագրերի պատասխանատուների, ամբիոնի վարիչների, ֆակուլտետի դեկանի հաշվետվությունները:*
/զեկ. Կ. Հովսեփյան, Ա. Սիմոնյան, Ա. Ցուցույան, Մ. Զաքարյան/

ԼՍԵՑԻՆ- Ֆակուլտետի խորհրդի նիստը բացեց և օրակարգը ներկայացրեց դեկանի ժ/պ, խորհրդի նախագահ Մ. Ա. Զաքարյանը: Օրակարգը հաստատելուց հետո նիստի մասնակիցներն անցան օրակարգի հարցերի քննարկմանը:

Նիստը վարում էր Մ. Ա. Զաքարյանը:

1. Օրակարգի առաջին հարցը ներկայացրեց խորհրդի նախագահ Մ. Ա. Զաքարյանը: Զեկուցողը անդրադարձավ 2016-2017 ուստարվա քննաշրջանի գրաֆիկին: Նա նշեց, որ 2016-2017 ուստարվա ամփոփիչ քննությունները անց են կացվելու 2017 թ. հունվարի 9-ից փետրվարի 27-ը ընկած ժամանակահատվածում, որը կազմվել է ի շնորհիվ ուսանողների և դասախոսների հետ համատեղ աշխատանքի:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ- Ա.Վ. Ցուցուլյանը, Ք.Վ. Օթարյանը, Կ.Հ. Հովսեփյանը և ուրիշներ:

ՈՐՈՇԵՑԻՆ- Հաստատել 2016-2017 ուստարվա I կիսամյակի քննաշրջանի անկացման գրաֆիկը :

2. Օրակարգի երկրորդ հարցը ներկայացրեց գիտխորհրդի նախագահ Մ. Ա. Զաքարյանը: Զեկուցողը ամփոփեց 2016-2017 ուստարվա II ընթացիկ քննությունների և ընթացիկ ստուգումների արդյունքները:/ամփոփ տվյալները կցվում են արձանագրության տեքստին/: Զեկուցողը ամբիոններին տվեց ընդհանուր հանձնարարական ուսումնական գործընթացի վերաբերյալ: **ՈՐՈՇԵՑԻՆ-** Հանձնարարել ամբիոններին, որ քննությունների հարցաշարերը ժամանակին տրվեն ուսանողներին:
3. Օրակարգի երրորդ հարցի առաջին մասը ներկայացրեցին կադաստր և քարտեզագրություն, ինչպես նաև ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա կրթական ծրագերերի պատասխանատուներ Կ. Հովսեփյանը և Ա. Սիմոնյանը: Նրանք նշեցին, որ եկու մասնագիտությունների համար ստեղծվել են մասնագիտական խմբեր, որոնք կզբաղվեն կրթական ծրագրերի վերանայմամաբ: Ամբողջական հաշվետվությունները ներկայացվել են ուսումնական վարչություն: Երրորդ հարցի երկրորդ մասը ներկայացրեց ընդհանուր մաթեմատիկայի և բնագիտության ամբիոնի վարիչ Ա. Վ. Ցուցուլյանը: Նա ներկայացրեց ամբիոնի կողմից կատարված բոլոր աշխատանքները: Օրակարգի երրորդ հարցի երրորդ մասը ներկայացրեց գիտխորհրդի նախագահ Մ. Զաքարյանը: Նա ներկայացրեց անցնող տարվա ընթացքում ֆակուլտետում կատարված աշխատանքը՝ նշելով ինչպես ձեռքբերումները, այնպես էլ թերացումները:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ- Գ. Վ. Գուլակյանը, Ա. Վ. Ցուցուլյանը: Նրանք կարևորեցին իրականացված աշխատանքը և մատնանշեցին այն հիմնական ուղղությունները, որտեղ եղել են ձեռքբերումներ:

ՈՐՈՇԵՑԻՆ –2016 թ. կրթական ծրագրերի պատասխանատուների, ամբիոնների, և ֆակուլտետի կատարած աշխատանքները գնահատել բավարար:

ՆԱԽԱԳԱՀ	Մ.Ա. ԶԱՔԱՐՅԱՆ
ՔԱՐՏՈՒՂԱՐ	Կ. Հ. ՀՈՎՍԵՓՅԱՆ